այդ մասին որև է որոշում չուներ, և դրօշակն իր ամբողջութեան մէջ, գոյների ընտրութիւնն ու դասաւորութիւնը, աւելի շուտ, արդիւնք էր քէֆարկութեան պատահականութեան:

Պատգամաւորների մի մասի կողմից մասնաւոր առարկութիւն էր լսւում — գլխաւորապէս գործնական տեսակէտից — նարնջագոյնի դէմ — Հայաստանում դժուար էր այդ գոյնի կտոր գտնել: Առաջարկւում էր փոխարէնը դնել կանաչ գոյն. ոմանք փաստ էին բերում, որ կանաչը մեր պատմական գոյներից մէկն է: Բայց նարնջի գոյնը առանձնապէս պաշտպանում էր Քաջազնունին, որ ղեկավարւում էր սոսկ գեղասիրական նկատումներով. կարմիրի, կապոյտի և նարնջագոյնի ներդաշնակութիւնը դիւր էր դալիս նրա ճաշակին:

Կային, սակայն, հայկական եռագոյնի մէջ և դաղափար ու խորհուրդ դնողներ: Այդ գոյները, կարծես, բխում էին մեր կեանքից, խորհրդանշում էին հայ պետականութեան ծագումն ու ապագան: Կարմիրը հայ ժողովրդի թափած արիւնն էր. կապոյտը՝ Հայաստանի կապոյտ երկինքը և նարնջի կամ ոսկու գոյնը՝ խտացումը աշխատանքի: Հայ ժողովուրդը, որ արիւնով էր ձեռք բերել իր ազատութիւնը, հայրենի կապոյտ երկնքի տակ, իր համբաւաւոր աշխատասիրութեամբ՝ պիտի վերաշինէր երկիրը և ապրէր ազատ ու երջանիկ...

Հայաստանի Խորհրդի պաշտօնական բացումը նշանակւեց օգոստոս 1-ին:

Երկու օր առաջ, յուլիս 30-ին, Երևան եկան գերմանական ներկայացուցիչ գօր. Ֆոն-Քրեսը և աւստրիական ներկայացուցիչ բարոն Ֆրանկելշտէյնը Հայաստանի դիւ. ներկայացուցիչ Ա. Զամալեանի և մի քանի սպաների ուղեկցութեամբ: Կայարանում նրանց ցոյց տրւեց հանդիսաւոր ընդունելութիւն: Երեկոյեան տրւեց հացկերոյթ քաղաքագլխի կողմից:

Յաջորդ օր նրանք այցելեցին վարչապետին ու Հայաստանի Խորհրդի նախագահին, ապա մեկնեցին Էջմիածին՝ տեսնելու համար կաթուղիկոսի հետ: Ժամը 5-ին վերադարձան Էջմիածնից և ընդունեցին Հայաստանի Խորհրդի ու վարչապետի փոխայցելութիւնը և ունեցան նրանց հետ երկար խօսակցութիւն՝ հայկական գործերի մասին: Նրանց այցելեցին և միւս նախարարները: Երեկոյեան կառավարութիւնը հացկերոյթ տւեց ի պատիւ հիւրերի, որին ներկայ էին և Երևանում գտնւող թիւրք սպաները: Արտասանւեցին ճառեր: Գիշերը Ֆոն-Քրեսը մեկնեց Թիֆլիս, իսկ բարոն Ֆրանկելշտէյնը մնաց Հայաստանի Խորհրդի բացմանը ներկայ գտնւելու համար:

Առաջին դիւանագիտական ընդունելութիւնն էր այս Հայաստանի հողի վրա:

*

Օգոստ. 1-ին, Երևանի քաղաքային ակումբի դահլիճում, հանդիսաւոր շքով բացւեց Հայաստանի Խորհրդի անդրանիկ նիստը: Քաղաքը ընդունել էր տօնական կերպարանք: Փողոցները բռնած էին բազմութիւններով: Ակումբի առջև երկկարդ շարած էր զօրքը: